ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԱՅՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

2023Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ

2024թ.

2023Թ.-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

- ***Համաշխարհային տնտեսություն.*** շարունակվել է ծառայությունների ոլորտի ակտիվության աճը և մշակող արդյունաբերության ոլորտի անկումը: Նավթի, մոլիբդենի և պարենային ապրանքների գները նվազել են նոյեմբեր ամսվա նկատմամբ, իսկ պղնձի գինը՝ աճել:
- ***Տնտեսության արտաքին հատված.*** արձանագրվել է արտահանման և ներմուծման աճի տեմպերի արագացում: Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ ՀՀ դրամը դոլարի նկատմամբ արժեզրկվել է 2.5%-ով: Եվրոյի նկատմամբ դրամի՝ հուլիսից նկատվող արժեզրկման տեմպը արագացել է նոյեմբերին՝ կազմելով 5.4%: Ռուսական ռուբլու նկատմամբ դրամի արժևորման տեմպը նախորդ ամսվա համեմատ թուլացել է՝ կազմելով 34.6%: Շարունակվել է նաև ՀՀ այցելած զբոսաշրջիկների աճի տեմպի դանդաղումը (աճը կազմել է 1.7%-ով):
- ***Տնտեսության իրական հատված.*** տնտեսական ակտիվության աճի տեմպը դեկտեմբերին կազմել է 9.5%՝ նոյեմբերի համեմատ դանդաղելով 1.7 տոկոսային կետով՝ հիմնականում պայմանավորված արդյունաբերության աճի տեմպի դանդաղմամբ: 12 ամսյա գնաճը կազմել է -0.6% (միջին գնաճը հունվար-դեկտեմբերին՝ 2.0%), մինչդեռ բնականոն գնաճը կազմել է -0.4%:
- ***Տնտեսության ֆինանսական հատված.*** բանկային համակարգի ֆինանսական միջնորդությունը շարունակել է առաջանցիկ լինել տնտեսական ակտիվության համեմատ: Դեկտեմբերի 12-ին ԿԲ-ն նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 9.25%:
- ***Տնտեսության հարկաբյուջետային հատված.*** Հարկային եկամուտների աճի տեմպը արագացել է՝ կազմելով 25.2%, իսկ տարվա ցուցանիշի աճը կազմել է 15.4%: Պետական բյուջեի ծախսերի տարվա աճը կազմել է 13.6%-ով: Բյուջեի պակասուրդը տարվա համար կազմել է 188.9 մլրդ դրամ՝ կտրուկ ընդլայնվելով հունվար-նոյեմբերի ցուցանիշից:

1. **Միջազգային զարգացումներ:** **Դեկտեմբերին համաշխարհային տնտեսական ակտիվության աճ է գրանցվել՝ 2023թ.-ը ամփոփելով ավելի դրական միտումներով, սակայն ծառայությունների և մշակող արդյունաբերության ոլորտների տարամիտումը դեռևս պահպանվել է. ծառայությունների ոլորտի ավելի արագ աճը հակադրվել է մշակող արդյունաբերության արտադրանքի անկմանը:** Եվրագոտում շարունակվում են կուտակվել ռեցեսիայի ռիսկերը, ԱՄՆ-ում գրանցվել են աճի ավելի համեստ տեմպեր, իսկ Չինաստանում՝ ավելի արագ: Եվրոգոտում մշակող արդյունաբերության և ծառայությունների ոլորտները դեկտեմբերին գրանցել են արտադրանքի անկում, ընդ որում՝ անկման տեմպերը հիմնականում անփոփոխ են մնացել նախորդ ամսվա նկատմամբ: ԱՄՆ-ում գրանցված ցածր աճը պայմանավորված է եղել գործարար ակտիվության աննշան աճով: Ընդ որում, աճի հիմնական գործոն է շարունակել մնալ ծառայությունների ոլորտի ընդլայնումը, մինչդեռ մշակող արդյունաբերության ոլորտը կտրուկ նվազել է: Չինաստանի գրանցած ցուցանիշները վկայում են գործարար ակտիվության շարունակական աճի մասին: Մշակող արդյունաբերության և ծառայությունների ոլորտները գրանցել են մայիսից ի վեր լավագույն արդյունքները: ՌԴ-ում գրանցված կտրուկ աճը պայմանավորված է եղել ինչպես մշակող արդյունաբերության, այնպես էլ ծառայությունների ավելի արագ աճով:

Գծապատկեր 1.1. Composite PMI-ի միտումները.



Դեկտեմբերին գնաճը ԱՄՆ-ում կազմել է 3.4%՝ նոյեմբերի 3.1% գնաճի համեմատ, որը վերջին հինգ ամիսների նվազագույն ցուցանիշն էր: Սա պայմանավորված է եղել էներգիայի գների նվազման ավելի դանդաղ տեմպերով: Իսկ Եվրագոտում դեկտեմբերին գնաճը կազմել է 2.9% (նոյեմբերին՝ 2.4%)՝ «կտրելով» վերջին յոթ ամիսների շարունակական նվազման շղթան: Մինչդեռ Չինաստանում երրորդ ամիսն անընդմեջ շարունակվել են գնանկումային միտումները: Միաժամանակ, ՌԴ-ում յոթ ամսվա շարունակական աճից հետո, դեկտեմբերին գնաճի տեմպերը դանդաղել են՝ կազմելով 7.4% (նոյեմբերին՝ 7.5%):

Գործընկեր երկրների կենտրոնական բանկերի կողմից շարունակվել է իրականացվել զսպող քաղաքականություն: ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգը և Եվրոպական կենտրոնական բանկը գնաճի շարունակական նվազմանը զուգահեռ դեռևս պահպանել են քաղաքականության տոկոսադրույքի բարձր մակարդակը: ՌԴ կենտրոնական բանկը, 1 տոկոսային կետով բարձրացնելով հիմնական տոկոսադրույքը, դեկտեմբերին սահմանել է 16%՝ պայմանավորված աճող գնաճային ճնշումներով: Եվրոպական կենտրոնական բանկը և ԱՄՆ դաշնային պահուստային համակարգը շարունակել են իրականացնել զսպող դրամավարկային քաղաքականություն՝ պահպանելով սահմանված տոկոսադրույքները: Մասնավորապես՝ ԱՄՆ ԴՊՀ-ն դեկտեմբերին քաղաքականության տոկոսադրույքը պահպանել է 5.25 - 5.5%, իսկ ԵԿԲ-ն՝ 4.5% մակարդակում:

Գծապատկեր 1.2. Գնաճն ու դրամավարակային քաղաքականության արձագանքը գործընկեր երկրներում



Մետաղների և պարենային ապրանքների շուկաներում դեկտեմբեր ամսին դիտվել են հետևյալ միտումները. նավթի միջազգային գինը նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 6.4%-ով, պղնձի գինն աճել է 2.6%-ով, մոլիբդենի գինը՝ նվազել 21.9%-ով, իսկ պարենային ապրանքների գները՝ 1.5%-ով: Սեպտեմբերից ի վեր դիտվել է նավթի գների աստիճանական նվազում. նվազման ուղղությամբ ճնշումները պայմանավորված են եղել համաշխարհային տնտեսական թույլ ակտիվությամբ, ԱՄՆ-ից ռեկորդային

արդյունահանմամբ և Ռուսաստանի կողմից նավթի կայուն արդյունահանմամբ ու արտահանմամբ: Նվազման ուղղությամբ այս ճնշումները դրսևորվել են մինչև դեկտեմբերի առաջին կեսը, իսկ երկրորդ կեսից նավթի գինը սկսել է աճել՝ պայմանավորված մերձավորարևելյան հակամարտության սրացմամբ (մասնավորապես, Կարմիր ծովում բեռնափոխադրող նավերի վրա բազմաթիվ հարձակումներ, որոնք հանգեցրին Կարմիր ծովով տարանցման ապահովագրավճարների աճի), ՕՊԵԿ+-ի կողմից արդյունահանման կրճատումների երկարաձգմամբ և խորացմամբ, ՕՊԵԿ+-ի կազմից Անգոլայի դուրս գալու, ինչպես նաև ԱՄՆ կառավարության՝ նավթի ռազմավարական պաշարները համալրելու համար նավթ գնելու հայտարարություններով: Արդյունքում, նավթի միջազգային գինը դեկտեմբեր ամսին կազմել է 78 ԱՄՆ դոլար մեկ բարելի դիմաց՝ գրանցելով վերջին չորս ամիսների ամենացածր գինը: Նախորդ ամսվա նկատմամբ այն նվազել է 6.4%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ՝ 3.8%-ով:

Պղնձի միջազգային գինը դեկտեմբերին նախորդ ամսվա համեմատ աճել է 2.6%-ով՝ կազմելով 8399.9 ԱՄՆ դոլար մեկ տոննայի դիմաց, իսկ նախորդ տարվա համեմատ՝ 0.3%: Մետաղի գնի աճը, հիմնականում, պայմանավորված է եղել Չինաստանի մշակող արդյունաբերության և ծառայությունների ոլորտի վերականգնմամբ: Մոլիբդենի միջազգային գինը օգոստոս ամսվա կտրուկ աճից հետո աստիճանաբար նվազել է, սակայն դեկտեմբերին գրանցվել է նախորդ ամսվա նկատմամբ կտրուկ անկում՝ 21.9%-ով, իսկ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ՝ 7.3%-ով: Արդյունքում, դեկտեմբերին մոլիբդենի միջազգային գինը կազմել է 43244 ԱՄՆ դոլար մեկ տոննայի դիմաց:

Պարենային ապրանքների համաշխարհային գինը նախորդ ամսվա համեմատ նվազել է 1.5%-ով՝ պայմանավորված շաքարավազի գնի կտրուկ անկմամբ (16.6%): Շաքարավազի գների անկումը հիմնականում պայմանավորված է եղել Բրազիլիայում արտադրության արագ տեմպերով, ինչպես նաև Հնդկաստանում էթանոլի արտադրության համար օգտագործվող շաքարեղեգի կրճատմամբ:

Գծապատկեր 1.3. Նավթի, մետաղների և պարենի գների զարգացումներ





2. Արտաքին հատվածի զարգացումներ: 2023թ. վերջին ամիսներին արձանագրվել է արտահանման և ներմուծման աճի տեմպերի զգալի արագացում: Դեկտեմբերին արտահանման տեմպի արագացումը շարունակվել է՝ հասնելով 2.4 անգամի (նախորդ ամսվա աճը՝ 86.4%), որին ամենամեծ նպաստումն է ունեցել դեպի ԱՄԷ արտահանումը: **Ներմուծումն աճել է 40.2%-ով (նախորդ ամսվա աճը՝ 25.5%)**: Իսկ 2023 թվականի նախորդ տարվա նկատմամբ արտահանման և ներմուծման աճերը կազմել են համապատասխանաբար՝ 55.3% և 40.2%:

Գծապատկեր 2.1. Արտահանման և ներմուծման միտումները, մլն դոլար



2023թ. դեկտեմբերին շարունակվել է արձանագրվել ՀՀ այցելած զբոսաշրջիկների աճի տեմպի դանդաղում՝ կազմելով 1.7% (նախորդ ամսվա աճը՝ 3.7%): Աճին ամենամեծ նպաստումն են ունեցել ՌԴ զբոսաշրջիկները: 2023 թվականին ՀՀ այցելած զբոսաշրջիկների թիվը նախորդ տարվա համեմատ աճել է 39%-ով, որին ամենամեծ նպաստումն է ունեցել ՌԴ զբոսաշրջիկների աճը (շուրջ 21%-կետ):

Գծապատկեր 2.2. ՌԴ-ից և այլ երկրներից դեպի ՀՀ զբոսաշրջիկների հոսքերը



2023թ. դեկտեբերին շարունակել են նվազել ոչ առևտրային բնույթի զուտ դրամական փոխանցումները՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 48%-ով՝ պայմանավորված հիմնականում ՌԴ-ից փոխանցումների շուրջ 70.1 տոկոս նվազմամբ: 2023 թվականին ոչ ոչ առևտրային բնույթի զուտ դրամական փոխանցումները նվազել են 44.3%-ով:

Գծապատկեր 2.3. Ոչ առևտրային բնույթի ֆիզիկական անձանց փոխանցումների զուտ ներհոսքը



ՀՀ դրամը դեկտեմբերին ռուբլու նկատմամբ շարունակել է արժևորվել, իսկ դոլարի և եվրոյի նկատմամբ պահպանվել է արժեզրկման միտումը: Մասնավորապես՝ դեկտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամն արժեզրկվել է շուրջ 2.5%-ով: Եվրոյի նկատմամբ ևս դրամը արժեզրկվել է 5.4%-ով, իսկ ռուսական ռուբլու նկատմամբ՝արժևորվել 34.6%-ով: Ընդհանուր առմամբ, 2023թ.-ին նախորդ տարվա համեմատ ՀՀ դրամը շարունակել է հիմնական արժույթների նկատմամբ արժևորված մնալ: Մասնավորապես, ԱՄՆ դոլարի

նկատմամբ դրամն արժևորվել է 11%-ով, եվրոյի նկատմամբ՝ 8.5%-ով, իսկ ռուբլու նկատմամբ՝ 39.4%-ով:

Գծապատկեր 2.4. ՀՀ դրամի անվանական փոխարժեքի դինամիկան հիմնական արժույթների նկատմամբ



3. ՀՀ տնտեսական զարգացումներ: Տնտեսական ակտիվության աճի բարձր տեմպերը պահպանվել են նաև դեկտեմբեր ամսին, սակայն նոյեմբերի համեմատ դանդաղել են 1.7 տոկոսային կետով (պայմանավորված հիմնականում արդյունաբերության աճի տեմպի 3.8 տոկոսային կետով դանդաղմամբ) և կազմել 9.5%: Արդյունաբերության աճի տեմպի դանդաղման պատճառ է հանդիսացել հիմնականում ոսկերչական արտադրատեսակների արտադրության աճի տեմպի դանդաղումը: Արդյունքում հունվար-դեկտեմբերին գրանցվել է ՏԱՑ-ի 9.4% աճ՝ պահպանվելով հունվար-նոյեմբերի մակարդակում:

Հատկանշական է, որ սեպտեմբեր ամսից ՏԱՑ-ի աճն ապահովող հիմնական ճյուղը հանդիսացել է առևտուրը (ի հաշիվ մեծածախ առևտրի), նախկին ծառայությունների փոխարեն, ինչը շարունակվել է նաև դեկտեմբերին: ՏԱՑ-ի աճը դեկտեմբերին պայմանավորված է եղել նաև արդյունաբերության (ի հաշիվ ոսկերչական արտադրատեսակների արտադրության) և ծառայությունների (ի հաշիվ ֆինանսական և ապահովագրական գործունեության, մշակույթ և զվարճություններ և հանգստի, կացության և հանրային սննդի կազմակերպման, ինչպես նաև անշարժ գույքի հետ կապված գործունեության) աճերով: Շինարարության ճյուղը նույնպես նպաստել է աճին: Ընդ որում՝ շինարարության աճն ըստ ֆինանսավորման աղբյուրների պայմանավորված է եղել հիմնականում պետական բյուջեի և կազմակերպությունների միջոցներով իրականացված շինարարության աճով:

Գծապատկեր 3.1. ՏԱՑ և տնտեսության ճյուղերի աճերը (դիսկրետ, %)



Գծապատկեր 3.2. *ՏԱՑ և տնտեսության ճյուղերի աճերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (կուտակային, %)*



Տնտեսական բարձր ակտիվության պայմաններում դեկտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 7.8%-ով՝ կազմելով 333,162 դրամ (ընդ որում՝ պետական հատվածում աճել է 16.9%-ով՝ կազմելով 300,529 դրամ, իսկ ոչ պետականում՝ 4.6%-ով՝ կազմելով 346,377 դրամ): Աշխատավարձի աճին հիմնականում նպաստել են առևտրի, կրթության, մշակույթ, զվարճություններ և հանգստի, ինչպես նաև մշակող արդյունաբերության ոլորտների աշխատավարձերի աճերը: Իրական աշխատավարձը՝ 0.6% գնանկման պայմաններում աճել է 8.5%-ով:

Դեկտեմբերին պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը նվազել է 5.3%-ով, իսկ վարձու աշխատողների թիվն աճել՝ շուրջ 5.1%-ով, կազմելով 745,207 մարդ, պայմանավորված հիմնականում մշակող արդյունաբերության, կացության և հանրային սննդի կազմակերպման, շինարարության, մշակույթ, զվարճություններ և հանգստի, ինչպես նաև կրթության ոլորտներում աշխատողների թվի աճով:

Երրորդ եռամսյակում գործազրկության մակարդակը կազմել է 12.0%՝ նախորդ տարվա երրորդ եռամսյակի նկատմամբ աճելով 0.4 տոկոսային կետով: Գործազուրկների թիվն աճել է 5.8%-ով, զբաղվածներինը 1.5%-ով: Միաժամանակ, աշխատուժի առաջարկն աճել է 2.0%-ով:

Գծապատկեր 3.3. Միջին ամսական աշխատավարձ, վարձու աշխատողներ, (դիսկրետ)



ՀՀ անշարժ գույքի շուկայում դեկտեմբեր ամսին գները շարունակել են աճել՝ փոքր-ինչ դանդաղելով նոյեմբերի համեմատությամբ: Երևան քաղաքում բազմաբնակարան շենքերի բնակարանների շուկայական միջին գների աճը նոյեմբերի համեմատ ըստ վարչական շրջանների տատանվել է 0.6-ից 0.9% շրջանակներում, իսկ նախորդ տարվա դեկտեմբեր ամսվա նկատմամբ՝ 8.5-ից 16.0% շրջանակներում՝ ամենաբարձր գինը գրանցելով Կենտրոն վարչական շրջանում (1մ² մակերեսի համար՝ 900,000 դրամ), իսկ ամենացածր գինը՝ Նուբարաշեն վարչական շրջանում (1մ² մակերեսի համար՝ 226,000 դրամ): Մարզերում բնակարանների շուկայական միջին գների աճը նոյեմբերի համեմատ տատանվել է 0-ից 2.5% շրջանակներում, իսկ նախորդ տարվա դեկտեմբեր ամսվա նկատմամբ՝ 0.8-33.0%՝ ամենաբարձր գինը գրանցելով Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքում (1մ² մակերեսի համար՝ 435,050 դրամ), իսկ ամենացածր գինը՝ Լոռու մարզի Թումանյան քաղաքում (1մ² մակերեսի համար՝ 26,000 դրամ):

4. Դրամավարկային քաղաքականություն: Դեկտեմբերին արձանագրվել է գնանկում: 12 ամսյա գնաճը կազմել է -0.6% (միջին գնաճը հունվար-դեկտեմբերին՝ 2.0%), մինչդեռ բնականոն գնաճը կազմել է -0.4%: Դեկտեմբերի 12-ին Կենտրոնական բանկը նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 9.25%:

Գծապատկեր 4.1. Գնաճը և վերաֆինանսավորման տոկոսադրույքը



12 ամսյա գնաճը շարունակել է պայմանավորվել հիմնականում սննդամթերքի գնաճի բացասական (-2.0 տոկոսային կետ) և ծառայությունների գնաճի դրական (1.0 տոկոսային կետ) նպաստումների հակակշռմամբ, թեև վերջիններիս նվազման միտումը շարունակվել է:

Գծապատկեր 4.2. 12 ամսյա գնաճին նպաստումները, %-ային կետ



5. Ֆինանսական միջնորդություն: Դեկտեմբերին բանկային համակարգի ֆինանսական միջնորդությունը շարունակել է առաջանցիկ լինել տնտեսական ակտիվության համեմատ, որին նպաստել է 2022թ.-ի կեսերից բանկային համակարգում կուտակված լրացուցիչ իրացվելիությունը: Այսպես, ի տարբերություն նախորդ տարվա և այս տարվա առաջին ինն ամիսներին վարկերի ծավալների աճի նկատմամբ ավանդների ծավալների աճի զգալիորեն գերազանցմանը՝ ներկայումս նկատվել է հակառակ միտումը. վարկերի ծավալների աճի տեմպը գերազանցել է ավանդների ծավալների աճին: Ռեզիդենտների ավանդների աճը կազմել է 17%, իսկ ռեզիդենտների վարկերի աճը՝ 21.9%: Միաժամանակ, վարկերի աճն ըստ ոլորտների առավել ընդգրկուն է դարձել (չնայած ամենաբարձր նպաստումը շարունակում են ապահովել հիփոթեքային և սպառողական վարկերը)՝ ներառելով նաև տնտեսության ոլորտների (բացառությամբ՝ արդյունաբերության) վարկավորման ավելի բարձր աճի տեմպեր: Ամենաբարձր աճերն արձանագրվել են շինարարության և սպասարկման ոլորտներում՝ համապատասխանաբար 42.4% և 31.2%: Իսկ ավանդների և վարկերի դրական տարբերությունը, որը վերջին 2 տարիների ընթացքում էականորեն բարձրացել է և ապահովում է զգալի իրացվելիության բարձիկ, սկսել է աստիճանաբար փոքրանալ, սակայն շարունակում է գտնվել պատմականորեն բարձր մակարդակում՝ մասամբ պայմանավորված նաև ոչ ռեզիդենտների ավանդների պահպանվող բարձր ցուցանիշով (2022թ.-ի փետրվարի ցուցանիշից բարձր շուրջ 485 մլրդ դրամով):

Գծապատկեր 5.1. Բանկային համակարգի վարկերի և ավանդների 12 ամսյա աճերը, %



ՀՀ ֆինանսական շուկայում պետական պարտատոմսերի եկամտաբերությունները աճի որոշակի միտումներ են ունեցել՝ պայմանավորված հարաբերական պահանջարկի նվազմամբ, իսկ վարկերի և ավանդների տոկոսադրույքները շարունակել են գտնվել իրենց միջին մակարդակների շրջակայքում: Բացառություն են հիփոթեքային և սպառողական վարկերը, որոնց տոկոսադրույքների աճը շարունակվել է դրանց նկատմամբ բարձր պահանջարկի ազդեցությամբ:

Գծապատկեր 5.2. Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները, %



6. Հարկաբյուջետային հատված: Հարկային եկամուտները շարունակել են աճել բարձր տեմպերով: 2023թ.-ի դեկտեմբերին հարկային եկամուտները կազմել են 267.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 25.2%-ով: Հունվար-դեկտեմբեր ամիսներին հարկային եկամուտները կազմել են 2221.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 15.4 %-ով:

Գծապատկեր 6.1. Հարկային եկամուտների աճի տեմպը, %



Շահութահարկը և ավելացված արժեքի հարկը շարունակել են լինել հարկային եկամուտների աճը պայմանավորող հիմնական աղբյուրները՝ 5.1%-ային կետ և 4.5%-ային կետ մասնակցությամբ: Միաժամանակ, զգալի է եղել նաև եկամտային հարկի դերը, որը հարկային եկամուտների աճին նպաստել է 4.1%-ային կետով: Բացասական նպաստում են ունեցել պետական տուրքերը, ինչը պայմանավորված է եղել մետաղական հանքաքարի համար ժամանակավոր ներմուծված արտահանման տուրքի չեղարկմամբ, ինչպես նաև բնապահպանական և բնօգտագործման վճարներով:

Գծապատկեր 6.2. Հարկային եկամուտների աճին նպաստումները, %-ային կետ



Պետական բյուջեի եկամուտների աճը առաջանցիկ է եղել ծախսերի նկատմամբ և հանգեցրել պետական բյուջեի դեֆիցիտի: Ընդհանուր առմամբ, հունվար-դեկտեմբեր ամիսներին պետական բյուջեն ունեցել է 2358.7 մլրդ դրամի եկամուտներ (նախորդ տարվա հունվար-դեկտեմբերի համեմատությամբ աճելով 14.3%-ով), և կատարել 2547.6 մլրդ դրամի ծախսեր՝ նախորդ տարվա հունվար-դեկտեմբերի համեմատությամբ աճելով 13.6%-ով: Նշված ծախսերը ընդգրկել են 2075.0 մլրդ դրամի ընթացիկ և 472.6.0 մլրդ դրամի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ, որոնք նախորդ տարվա հունվար-դեկտեմբերի համեմատ աճել են համապատասխանաբար 11.4 և 24.2 տոկոսներով:

Գծապատկեր 6.3 Պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և պակասուրդը



Պետական բյուջեի պակասուրդը կտրուկ ընդլայնվել է նոյեմբերից, իսկ տարվա համար ձևավորվել է մոտ նախորդ տարվա ցուցանիշին: Դեկտեմբերի զարգացումները արտացոլել են պակասուրդային բյուջե՝ եկամուտների մակարդակին 126.1 մլրդ դրամով գերազանցող ծախսերով: Արդյունքում, 2023թ-ի հունվար-դեկտեմբեր ամիսների պակասուրդը կազմել է 188.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 179.5 մլրդ դրամ և 2023-ի հունվար-նոյեմբեր ամիսների 62.7 մլրդ դրամ պակասուրդի ցուցանիշի նկատմամբ: